

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Դեղերի մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի

Քացատրական նշումներ

Ստորև ներկայացված Կարգավորման ազդեցության գնահատման ամփոփաթեթին (Ամփոփաթեթ) օգտագործվում է կարգավորման ազդեցության գնահատման (ԿԱԳ) գործընթացին մասնակից մարմինների (կարգավորողների) կողմից՝ որպես կարգավորման ազդեցության գնահատման վերլուծության գործընթացում օժանդակ գործիք:

Ամփոփաթեթը կազմված է 5 բաժիններից, որոնք հանդիսանում են ԿԱԳ-ի հիմնական վերլուծական քայլերը: Դրանք են՝

1. Խնդրի սահմանում,
2. Ելակետային սցենար,
3. Նպատակներ,
4. Կարգավորիչ և ոչ կարգավորիչ գործիքներ,
5. Ազդեցություններ (Ծախսեր և Օգուտներ):

ԿԱԳ ձեռնարկով ուղղորդումը պարտադիր է: Այն կառուցված է նույն բաժիններից և բացատրում է ստորև թվարկված հարցերին պատասխանելու մեթոդները և գործիքները:

Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել՝

ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ

1	Նախաձեռնության վերնագիրը	Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի մեծածախ առևտրի և ներմուծման ոլորտում որակի, մատչելիության, անվտանգության և արդյունավետության ապահովում
2	Պատասխանատու ստորաբաժանում(ները)	ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի

		իրականացման գրասենյակ պետական հիմնարկ
3	Կոնտակտային անձ (Էլ-փոստ, հեռախոսահամար)	Անահիտ Երիցյան a.yeritsyan@regulations.am (+37410) 53 22 57 * 116 (+37410) 53 22 79 * 116
4	Ամսաթիվ	.05.2016

Բովանդակություն

ԲԱԺԻՆ 1 – ԽՆԴԻՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ և ՍԱՀՄԱՆՈՒՄԸ 4

ԲԱԺԻՆ 2 – ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՍՑԵՆԱՐ («ԱՌԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿ»/«ՈՉԻՆՉ ՉԱՆԵԼ» ՏԱՐԲԵՐԱԿ)..... 11

ԲԱԺԻՆ 3 - ՆՊԱՏԱԿՆԵՐ 17

ԲԱԺԻՆ 4 – ԿԱՐԳԱՎՈՐԻՉ և ՈՉ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԳՈՐԾԻՔՆԵՐ և ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ22

5-ՐԴ ԲԱԺԻՆ – ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 44

 Ա) Տնտեսական ազդեցություններ 44

 Բ) Ազդեցությունը մրցակցության և պետական օժանդակության վրա 55

 Գ) Հարկաբյուջետային և բյուջետային ազդեցություններ հղումներ 59

 Դ) Սոցիալական և հանրային անվտանգության ազդեցություններ 66

 Ե) Առողջապահական ազդեցություններ 70

 Զ) Շրջական միջավայրի ազդեցություններ 74

 Է) Հակակոռուպցիոն 78

ԲԱԺԻՆ 1 – ԽՆԴՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ և ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Խնդրի որոշումը կամ սահմանումը թերևս կարևորագույն քայլն է ԿԱԳ-ի նախապատրաստման գործընթացում: Խնդիրը լուծելու համար այն պետք է ճիշտ բնութագրվի: Խնդրի արժեվորումը «քանակական» կամ նույնիսկ «դրամական» արտահայտությամբ կարող է տարբերվել դեպքից դեպք: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հավաքագրել և օգտագործել բոլոր հնարավոր այն փաստերը, որոնք կարող են ապացույց հանդիսանալ և օգնել խնդրի կարևորությունը և մասշտաբը որոշելու համար: Եթե Հայաստանի համար պահանջվող տվյալները բացակայում են, ապա անհրաժեշտ է հաշվի առնել և կատարել համանման երկրների համեմատական վերլուծություն: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ խնդրի առաջացման պատճառները, ինչպես նաև դրա ազդեցությունը տնտեսության տարբեր հատվածների և հասարակության տարբեր սոցիալական խմբերի վրա կարող են տարբեր լինել:

Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացված են գործողության տարբեր մասնակիցներ (դերակատարներ), ովքեր կարող են հաշվի առնվել խնդրի սահմանման ընթացքում:

Սոցիալական տարբերակում				Տնտեսական տարբերակում
Տարիքային խմբեր	Ըստ եկամտի բաշխվածության խմբեր	Խմբեր, որոնք ենթարկվում են խտրականության կամ գտնվում են այլ սոցիալական անբարենպաստ պայմաններում	Աշխարհագրական խմբեր	
<ul style="list-style-type: none"> ▪ Երեխաներ և երիտասարդներ ▪ Տարեցներ ▪ Հատուկ տարիքային խումբ 	<ul style="list-style-type: none"> ▪ Ցածր եկամուտ ունեցող անձինք ▪ Տնտեսապես ոչ ակտիվ անձիք ▪ Գործազուրկներ ▪ Անաշխատունակներ 	<ul style="list-style-type: none"> ▪ Ֆիզիկական կամ մտավոր սահմանափակումներով / բարդություններով անձինք ▪ Փախստականների խմբեր ▪ Ապաստան հայցող անձինք ▪ Ճանապարհորդողներ ▪ Միակողմանի ծնողազուրկ ընտանիքներ ▪ Սեռական փոքրամասնություններ ▪ Էթնիկ 	<ul style="list-style-type: none"> ▪ Աղքատ տնտեսական և/կամ առողջական ցուցանիշներով տարածքներում բնակվող անձիք ▪ Մեկուսացված/ գերբնակեցված տարածքներում բնակվող անձինք ▪ Ծառայություններին և հարմարություններին 	<ul style="list-style-type: none"> ▪ Հատուկ արդյունաբերական ոլորտներ ▪ Տնտեսվարող սուբյեկտների մեծությունը (օր.՝ վերազգային կորպորացիաներ, ՓՄՁ-ներ, անհատ ձեռնարկատերեր) ▪ Արժեքային շղթայում դիրքը (օր.՝ արտադրողներ, տեղափոխողներ, վերամշակողներ, մանրածախ առևտրականներ)

		փոքրամասնություններ (նշել) ▪ Կրոնական խմբեր (նշել)	հասանելիություն չունեցող անձիք ▪ Երրորդ երկրի քաղաքացիներ	▪ Սպառողներ ▪ Ներքին և արտաքին օպերատորներ ▪ Ներմուծման կամ արտահանման մեջ ներգրավված անձինք
--	--	---	--	---

Անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին՝ առաջնորդվելով ԿԱԳ ձեռնարկի Բաժին 1-ով:

1.	Ո՞րն է ձեր վերլուծության ենթակա օբյեկտը:	Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի մեծածախ առևտուր և դեղերի, հետազոտվող դեղագործական արտադրանքի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի ներմուծում
2.	Ո՞րն է ձեր վերլուծության ենթակա խնդիրը	Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի մեծածախ առևտրի և ներմուծման ոլորտում որակի, մատչելիության, անվտանգության և արդյունավետության ապահովում
3.	Ո՞րն է ձեր վերլուծության ենթակա խնդրի էությունը (թվարկել մեկից ավելի դրսևորումներ ըստ կարևորության):	<p>Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի շրջանառության մեծածախ իրացման օղակը մնացել է կարգավորումից և հսկողությունից դուրս, ինչի անմիջական դրսևորումներն են.</p> <ul style="list-style-type: none"> • արտադրողից սպառողին հասնելու ամբողջ ճանապարհին դեղերի անվտանգության և որակի ապահովման մեխանիզմների անկատարությունը • որակին ներկայացվող պահանջներին չհամապատասխանող դեղերի ներմուծումը • որակին ներկայացվող պահանջներին չհամապատասխանող դեղերի իրացում

<p>4.</p>	<p>Ո՛րքան մեծ է ձեր խնդիրը: – Ինչու՞: Ներկայացրեք խնդրի ծավալի նկարագրություն:¹</p>	<p>Խնդիրը Մեծ է: 2015թ սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՀՀ ԱՆ դեղերի փորձագիտական կենտրոնը իրականացրել է մեծածախ իրացում իրականացնող 35 (մոտ 38%) մատակարարների գործունեության գնահատում՝ ԱՀԿ երաշխավորությունների հիման վրա կազմված հարցաթերթիկի միջոցով: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ, ընդհանուր առմամբ ներդրված չէ որակի կառավարման համակարգ դեղերի մեծածախ բաշխման շղթայում, բացակայում են պատվերի բացթողնման արձանագրությունները և պատասխանատու անձի եզրակացությունը պատվերի բացթողնման վերաբերյալ, գործողությունների ստանդարտ ընթացակարգերը, ձեռք բերման աղբյուրի օրինականությունը հավաստող փաստաթղթերը: Որևէ կազմակերպությունում առկա չեն ներքին ստուգման արձանագրություններ: Ստացման և բացթողնման հաշվառման փաստաթղթերը զուտ ֆինանսահաշվապահական փաստաթղթեր են և դրանցով հնարավոր չէ հետևել դեղերի շարժին՝ ըստ սերիաների և, անհրաժեշտության դեպքում, իրականացնել հետհավաք: Բավարար տարածքներ ունեն հետազոտվածների 28%-ը, որոնք ունեն նաև առանձնացված տրանսպորտային միջոցներ դեղերը պատվիրատուին հասցնելու համար, սակայն առկա չեն ապացույցներ տեղափոխման ընթացքում ջերմաստիճանային ռեժիմի ապահովման մասին: Պահեստային տարածքների 23%-ում բացակայում է ջերմաչափը, իսկ 42%-ում խոնավաչափը, իսկ դրանք ունեցողների միայն 35% է իրականացնում տվյալների մշտադիտարկում: Մինչև ոչնչացումը ժամկետանց դեղերը առանձնացնում են մատակարարների 58%-ը: Ուսումնասիրության</p>
-----------	---	---

¹ **Օանդություն.** խնդրի մեծությունը կարող է գնահատվել տարբեր ձևերով: Օրինակ, հաշվի առնելով ազդեցության ենթարկված ձեռնարկությունների թիվը (ձեռնարկատիրությամբ զբաղվող սուբյեկտների ընդհանուր թվում կամ տվյալ տնտեսության ոլորտում զբաղված սուբյեկտների թվում), ՀՆԱ-ի վրա խնդրի ազդեցության չափը; խնդրի հետևանքով տուժած բնակչության թիվը և այլն:

		շրջանակներում հայտնաբերվել է նաև, որ մատակարարները չունեն տեղեկություն նախքան ՀՀ սահմանը հատելը դեղի տեղափոխման պայմանների մասին և չեն իրականացնում ձեռք բերման աղբյուրների աուդիտ:
5.	Որքա՞ն հրատապ է խնդիրը: – Ինչու՞: Ինչով է այն պայմանավորված:²	Խնդիրը հրատապ է, որովհետև ներկայումս այն մեծ է (Տես՝ կետ 4):
6.	Ի՞նչ հաճախականությամբ է առաջանում խնդիրը:	Խնդիրը կրում է մշտական բնույթ՝ պայմանավորված դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի մեծածախ իրացման գործընթացի անընդհատությամբ:
7.	Ու՞մ վրա է տարածվում խնդիրը:	<ul style="list-style-type: none"> • Սպառողներ • Դեղերի մանրածախ առևտուր իրականացնող դեղատներ և դեղատնային կրպակներ, որոնց համար դեղերի մեծածախ առևտուր իրականացնող սուբյեկտները հանդիսանում են մատակարարներ • Շուկայում գործող մատակարարներ (ներմուծողներ և արտադրողներ) և շուկա նոր մուտք գործող պոտենցիալ մատակարարներ
8.	Արդյո՞ք կա ՓՄՁ-ների վրա առանձնակի ազդեցություն: - Ինչու՞: Ներկայացրեք ազդեցության ենթարկվող խումբը/խմբերը:	Ոչ, քանի որ գործող օրենսդրությունը չի պարունակում ՓՄՁ-ներին առնչվող առանձնահատուկ դրույթներ:
9.	Որո՞նք են ձեր կողմից վկայակոչվող ապացույցների աղբյուրները: - Արդյո՞ք նրանք համապատասխան / հուսալի են:	<ul style="list-style-type: none"> • ՀՀ ԱՆ դեղերի փորձագիտական կենտրոնի կողմից մեծածախ իրացում իրականացնող 35 (մոտ 38%) մատակարարների գործունեության գնահատման արդյունքներ (Տես Հավելված 1 էջ 6) • 2009-2010թթ Առողջապահության Համաշխարհային

² **Ծանոթություն.** Խնդրի հրատապությունը կապված է անսպասելի իրավիճակի առաջացումից՝ թաքնված խնդրի հանկարծակի սրմամբ կամ վթարային իրավիճակի առաջացմամբ: Այն կարող է նաև գնահատվել, հաշվի առնելով տվյալ հարցի վերաբերյալ հակասությունները հասարակության շրջանում, այսինքն՝ որքանով է խնդիրը բախվում հասարակական շահերին՝ որպես մեկ ամբողջություն, հանրային պաշտպանությանը, կամ արդյոք համապատասխան շահառուների դիրքերը հակադրական են խնդրի շուրջ թե ոչ: Խնդրի քաղաքական կողմը կարող է հանդես գալ որպես հրատապության մեկ այլ գործոն, օրինակ, արդյոք խնդիրը ազդեցություն ունի թե չունի կառավարության ռազմավարական առաջնահերթությունների վրա:

		<p>Կազմակերպության կողմից (ԱՀԿ) մի շարք երկրներում իրականացված հետազոտության արդյունքներ (Տես Հավելված 1 էջ 6)</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած վիճակագրություն (Տես Հավելված 1 էջ 1-5) <p>Այո, աղբյուրները հուսալի են, սակայն ոչ ամբողջական, մասնավորապես, ՀՀ առողջապահության նախարարության կողմից, ի պատասխան վիճակագրական տվյալների պաշտոնական հարցման, տրամադրված տվյալները թերի են (Տես Հավելված 1 էջ 1-5): Նաև նկատվել են վիճակագրական տվյալների որոշակի անհամապատասխանություններ ՀՀ-ում դեղերի մանրաձախ վաճառքի գործընթացում դեղերի վերաբերյալ բողոքների /դեպքերի մասով տրամադրված տվյալներում (Տես Հավելված 1 էջ 3): Հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ չենք կարողացել ստանալ վիճակագրություն ՀՀ-ում իրացված դեղերի ծավալի մասին՝ չնայած, որ հարցում է կատարվել և ՀՀ առողջապահության նախարարությանը, և ՀՀ Ֆինանսների նախարարությանը:</p>
10.	<p>Որո՞նք են խնդրի հիմնական շարժիչ ուժերը կամ դրդիչները (պատճառները): Խնդրում ենք հստակորեն դուրս գրել և ճշտգրտորեն նկարագրել դրանք: Համոզվեք, որ նշել եք խնդրի պատճառահետևանքային կապերը: Դասակարգել դրանք ըստ առաջնահերթության:³</p>	<ul style="list-style-type: none"> • Գործող օրենսդրությունը չի նախատեսում կարգավորման և հսկողության մեխանիզմներ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի մեծածախ իրացման գործունեության համար: • Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի Հայաստանի Հանրապետություն օրենքի խախտմամբ արտադրելու կամ ներմուծելու կամ իրացնելու համար պատասխանատվություն սահմանված չէ: • Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծումը կարգավորող համապատասխան իրավական ակտում ներմուծման իրավունք

³ **Ծանոթություն.** պատճառները կարող են լինել տարբեր բնույթի՝ կարող են լինել կառուցվածքային, պայմանավորված լինել անհատական միջոցառումներով, մարդկային գործոններով, պատահարներով և այլն:

		ունեցող սուբյեկտների շրջանակի ոչ ճշգրիտ սահմանում, մասնավորապես այդպիսի սուբյեկտ են համարվում դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման և արտահանման լիցենզիա ունեցող տնտեսավարող սուբյեկտները, սակայն գործող օրենսդրությամբ նման լիցենզավորման գործընթաց սահմանված չէ:
11.	Կան արդյո՞ք պատճառների վերաբերյալ փաստեր (տվյալներ, ցուցանիշներ, վիճակագրություն), որոնք հիմնավորում են ձեր պնդումները:	Տես Բաժին 1-ի 4-րդ ու 15-րդ կետեր և Բաժին 2-ի 2-րդ կետ:
12.	Որո՞նք են խնդրի հետևանքները: Համոզվե՞ք, որ նշել եք խնդրի պատճառահետևանքային կապերը (թվարկեք հետևանքները ըստ պատճառահետևանքային շղթայում իրենց առաջացման):	Ներմուծման, փոխադրման, պահպանման, բաշխման գործընթացների ժամանակ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի պահպանման և տեղափոխման կանոնների խախտման արդյունքում վերջիններիս որակի անկում:
13.	Արդյո՞ք բոլոր հետևանքներն առաջանում են միաժամանակ: Խնդրում ենք մանրամասնել՝ նաև նշելով, թե հետևանքները երբ են առաջանում՝ կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակահատվածում:⁴ <u>Խնդրում ենք յուրաքանչյուր հետևանքը գնահատել առանձին:</u>	Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի որակի անկումը տեղի է ունենում կարճաժամկետ ժամանակահատվածում:
14.	Արդյո՞ք հետևանքները նույն կերպ են ազդում բոլոր սուբյեկտների վրա: Արդյո՞ք հետևանքները ՓՄՁ-ների վրա ունեն առանձնահատուկ ազդեցություն: Խնդրում ենք մանրամասնել:	1) Անորակ, ժամկետանց և վտանգավոր դեղերի մատուցումը բացասական ազդեցություն է ունենում բնակչության առողջության և կյանքի որակի վրա Գործող օրենսդրությունը չի պարունակում դեղերի մեծածախ առևտրի և ներմուծման գործունեությունը սահմանափակող որևէ դրույթներ ՓՄՁ-ների համար:
15.	Կան արդյո՞ք հետևանքների վերաբերյալ փաստեր	2014 և 2015 թ-ին ՀՀ-ում դեղերի մանրածախ վաճառքի գործընթացում

⁴ **Ծանոթություն.** կարճաժամկետ հետևանքները առաջանում են 1 տարվա ընթացքում; միջնաժամկետը՝ 2-5 տարվա ընթացքում; և երկարաժամկետը՝ 5-10 տարվա ընթացքում:

<p>(տվյալներ, ցուցանիշներ, վիճակագրություն), որոնք հիմնավորում են ձեր պնդումները:</p>	<p>դեղերի վերաբերյալ եղել է միջինում 118 բողոք /դեպք, որոնցից 2 եղել է դեղերի որակի վերաբերյալ, 76-ը եղել են ժամկետանց դեղերի, իսկ 41-ը՝ չգրանցված դեղերի վրաբերյալ: Սակայն պարզ չէ, արդյոք այս դեպքերը ծագել են մատակարարի պատճառով, թե դեղատանը: <i>(Տես՝ Հավելված 2 էջ 1 Աղյուսակ 2 (Աղբյուր՝ Հավելված 1 էջ 3))</i></p>
--	---

ԲԱԺԻՆ 2 – ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՍՅԵՆԱՐ («ԱՌԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿ»/ («ՈՉԻՆՉ ՉԱՆԵԼ» ՏԱՐԲԵՐԱԿ))

Ելակետային սցենարի նպատակն է բացատրել, թե ինչպես ներկայիս իրավիճակը կզարգանար առանց լրացուցիչ հանրային միջամտության, այն՝ «առանց քաղաքականության փոփոխման» սցենարն է և պատասխանում է հետևյալ հարցին. «Ի՞նչ տեղի կունենար, եթե ոչինչ չարվեր»: Այլ կերպ ասած, պետք է հստակեցնել, թե արդյոք վերը սահմանված խնդիրը պահանջում է արդյոք Կառավարության միջամտությունը թե ոչ: Այդ նպատակով անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին (առաջնորդվելով ԿԱԳ ձեռնարկի Բաժին 2-ով):


Աստիճանը, թե որքանով ելակետային սցենարը կարող է «քանակական» կամ անգամ «դրամական արժեք» ձեռք բերել, տարբերվում է դեպքից դեպք: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հավաքել և օգտագործել բոլոր այն ապացույցները, որոնք կարող են տալ գաղափար խնդրի կարևորության և չափերի վերաբերյալ: Եթե տվյալը բացակայում է Հայաստանի համար, պետք է հաշվի առնել և վերլուծական համեմատություն իրականացնել համանման երկրների հետ:

1	<p>Նկարագրեք ներկա իրավիճակը (Ցուցանիշներ, ցուցանիշների չափումներ, տվյալներ, աղբյուրներ, վիճակագրություն)</p>	<p>Գործող օրենսդրությունը չի նախատեսում կարգավորման և հսկողության մեխանիզմներ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի մեծածախ իրացման գործունեության համար, ինչը հանգեցրել է ներկայումս արտադրողից սպառողին հասնելու ամբողջ ճանապարհին դեղերի անվտանգության ու որակի երաշխավորման անհնարինության և շրջանառությունում ժամկետանց, անորակ, չգրանցված և վտանգավոր դեղերի առկայության: Սահմանված չէ պատասխանատվություն դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի ՀՀ օրենքի խախտմամբ արտադրելու կամ ներմուծելու կամ իրացնելու համար: Առկա է դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծումը կարգավորող համապատասխան իրավական ակտում ներմուծման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի ոչ ճշգրիտ սահմանում,</p>
---	--	--

մասնավորապես այդպիսի սուբյեկ են համարվում դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման և արտահանման լիցենզիա ունեցող տնտեսավարող սուբյեկտները, սակայն գործող օրենսդրությամբ նման լիցենզավորման գործընթաց սահմանված չէ: Ինչպես նաև արդյունավետ չեն օրենքով սահմանված դեպքերում չգրանցված դեղերի ներմուծման վերահսկողության մեխանիզմները:


2015թ սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՀՀ ԱՆ դեղերի փորձագիտական կենտրոնը իրականացրել է մեծածախ իրացում իրականացնող 35 (մոտ 38%) մատակարարների գործունեության գնահատում՝ ԱՀԿ երաշխավորությունների հիման վրա կազմված հարցաթերթիկի միջոցով: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ, ընդհանուր առմամբ ներդրված չէ որակի կառավարման համակարգ դեղերի մեծածախ բաշխման շղթայում, բացակայում են պատվերի բացթողնման արձանագրությունները և պատասխանատու անձի եզրակացությունը պատվերի բացթողնման վերաբերյալ, գործողությունների ստանդարտ ընթացակարգերը, ձեռք բերման աղբյուրի օրինականությունը հավաստող փաստաթղթերը: Որևէ կազմակերպությունում առկա չեն ներքին ստուգման արձանագրություններ: Ստացման և բացթողնման հաշվառման փաստաթղթերը զուտ ֆինանսահաշվապահական փաստաթղթեր են և դրանցով հնարավոր չէ հետևել դեղերի շարժին՝ ըստ սերիաների և, անհրաժեշտության դեպքում, իրականացնել հետհավաք: Բավարար տարածքներ ունեն հետազոտվածների 28%-ը, որոնք ունեն նաև առանձնացված տրանսպորտային միջոցներ դեղերը պատվիրատուին հասցնելու համար, սակայն առկա չեն ապացույցներ տեղափոխման ընթացքում ջերմաստիճանային ռեժիմի ապահովման մասին: Պահեստային տարածքների 23%-ում բացակայում է ջերմաչափը, իսկ 42%-խոնավաչափը, իսկ դրանք ունեցողների միայն 35% է

		<p>իրականացնում տվյալների մշտադիտարկում: Մինչև ոչնչացումը ժամկետանց դեղերը առանձնացնում են մատակարարների 58%-ը: Ուսումնասիրության շրջանակներում հայտնաբերվել է նաև, որ մատակարարները չունեն տեղեկություն նախքան ՀՀ սահմանը հատելը դեղի տեղափոխման պայմանների մասին և չեն իրականացնում ձեռք բերման աղբյուրների աուդիտ: Հետազոտության մանրամասն արդյունքները շուտով կիրառարակվեն գիտական ամսագրում:</p>
2	<p>Նկարագրեք թե ինչպես տվյալ իրավիճակը կզարգանա առանց որևէ լրացուցիչ միջամտության (ի՞նչ կպատահի, եթե ոչինչ չարվի): Ցուցանիշների միտումները:</p>	<p>ՀՀ ներմուծված դեղերի որակին ներկայացվող պահանջներին անհամապատասխանության դեպքերի թիվը 2008-2011 թվականների ընթացքում նվազել է տարեկան միջինում 1.5 դեպքով, իսկ 2012 թվականից սկսած՝ աճել տարեկան միջինում 6.5 դեպքով: Հարկ է նշել, որ եթե 2012-2014 թվականների ընթացքում ներմուծված դեղերի որակին ներկայացվող պահանջներին անհամապատասխանության դեպքերի թվի աճը կարելի է ինչ որ չափով բացատրել ՀՀ գրանցված դեղերի ներմուծման ծավալի տարեկան միջինում 4.5 % (մոտ 4մլն ԱՄՆ դոլար) աճով, ապա 2015 թվականին ՀՀ գրանցված դեղերի ներմուծման ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 19%-ով (մոտ 18մլն ԱՄՆ դոլար), սակայն դեղերի որակին ներկայացվող պահանջներին անհամապատասխանության դեպքերի թիվն այդ տարվա ընթացքում եղել է առավելագույնը՝ 26 դեպք, ինչը խոսում է այն մասին, որ որակին ներկայացվող պահանջներին անհամապատասխան դեղերի ծավալն ունի աճի միտում:</p> <p><i>Գծապատկեր 1. ՀՀ ներմուծված դեղերի՝ որակին ներկայացվող պահանջներին անհամապատասխանության արձանագրված դեպքերի քանակը 2007-2015 թթ ընթացքում</i></p>



Տես՝ Հավելված 2 էջ 1 Աղյուսակ 1 (Աղբյուր՝ Հավելված 1 էջ 1 և 3)

Գծապատկեր 2. ՀՀ ներմուծված դեղերի՝ որակին ներկայացվող պահանջներին անհամապատասխանության արձանագրված դեպքերի կանխատեսվող քանակը 2016-2020 թթ ընթացքում



Տես՝ Հավելված 2 էջ 1 Աղյուսակ 3

3 Արդյո՞ք խնդիրը մոտ է իր լուծմանը (Սցենար Ա) (կմնա նույնը կամ ինքստինքյան ժամանակի ընթացքում կթուլանա), թե դառնում է ավելի խնդրահարույց (Սցենար Բ) (կվատանա, խորանա): Խնդրում ենք բացատրել, թե ինչու՞:

Սցենար Բ՝ խնդիրն աստիճանաբար դառնում է ավելի խնդրահարույց: Համապատասխան վիճակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին չորս տարվա ընթացքում ՀՀ ներմուծված դեղերի որակին ներկայացվող պահանջներին անհամապատասխանության դեպքերի թիվն ունեցել է աճի միտում՝ տարեկան միջինում 4.6 դեպքով:

4 Ե՞րբ են տեղի ունենալու Սցենար Ա-ն կամ Սցենար

Սցենար Բ-ն տեղի կունենա կարճաժամկետ հատվածում, քանի որ ՀՀ

	Բ-ն: (կարճաժամկետ/միջնաժամկետ/երկարաժամկետ): Խնդրում ենք հիմնավորել ձեր պնդումը⁵:	ներմուծված դեղերի որակին ներկայացվող պահանջներին անհամապատասխանության դեպքերի թիվը տարեցտարի աճում է:
5	Որքա՞ն է Սցենար Ա-ի կամ Սցենար Բ-ի տեղի ունենալու հավանականությունը: Խնդրում ենք հիմնավորել ձեր պնդումը:	Առկա է Սցենար Բ-ի տեղի ունենալու մեծ հավանականություն, քանի որ ինչպես արդեն նշված վերջին չորս տարվա ընթացքում ՀՀ ներմուծված դեղերի որակի պահանջներին անհամապատասխանության դեպքերի թիվն աճել է տարեկան միջինում 4.6 դեպքով:
6	Ի՞նչ փաստերով են (տվյալներ, ցուցանիշներ, վիճակագրություն) հիմնավորվում ձեր պնդումները (Սցենար Ա-ի կամ Սցենար Բ-ի համար):	Տես Բաժին 1-ի կետ 15 և Բաժին 2-ի կետ 2
7	Ինչպիսի՞ միջոցառումներ են (քաղաքականություն, կարգավորումներ) պետության կողմից արդեն ձեռնարկված, որոնք անդրադառնում են / նպաստում են խնդրի (կամ խնդրի պատճառների) լուծումանը: – Ինչու՞ դրանք չեն լուծում խնդիրը:	<ul style="list-style-type: none"> • Ներկայումս դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի մեծածախ իրացման գործունեության համար գործող օրենսդրությամբ կարգավորման և հսկողության մեխանիզմներ նախատեսված չեն, իսկ դեղերի, հետազոտվող դեղագործական արտադրանքի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի ներմուծման գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության 2000 թ-ի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին» N 581-Ն որոմամբ, որը սակայն չի ապահովում առկա խնդրի լուծումներ և պարունակում է բացեր ու հակասություններ: • Մինչև 2007 թ-ը եղել է լիցենզավորման պահանջ դեղերի մեծածախ իրացման գործունեության համար, սակայն լիցենզավորումն իրականացվել է պարզ ընթացակարգով և չի լուծել առկա խնդիրը: • 2007 թ-ից հետո Առողջապահության ոլորտում պետական վերահսկողության և դեղորայքային քաղաքականության հիմնախնդիրների լուծում ծրագրի (ՀՀ կառավարության 2012 թ-ի

⁵ Ծանոթություն. կարճաժամկետ հետևանքները առաջանում են 1 տարվա ընթացքում; միջնաժամկետը՝ 2-5 տարվա ընթացքում; և երկարաժամկետը՝ 5-10 տարվա ընթացքում:

		<p>հոկտեմբերի 18-ի նիստի N 42 արձանագրային որոշում) շրջանակներում մշակվել է դեղերի մեծածախ իրացման գործունեության լիցենզավորման նախագիծ, սակայն այն չի ընդունվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այդ հարաբերությունների կարգավորումը պետք է ընդգրկվեր «Դեղերի մասին» նոր օրենքի նախագծում:</p>	
8	<p>Արդյո՞ք Կառավարության լրացուցիչ գործողությունները (միջամտությունը) անհրաժեշտ են: – Ինչու՞: Խնդրում ենք հստակեցնել:</p>	<p>Այո: Քանի որ խնդիրը մեծ է և ինքըստինքյան չի լուծվի:</p>	

ԲԱԺԻՆ 3 - ՆՊԱՏԱԿՆԵՐ

Ցանկացած միջամտություն պետք է ունենա հստակ և չափելի նպատակներ: Դրանք սահմանում են գործողության հիմնական օգուտները և համապատասխանաբար սահմանում լուծումների ընտրությունը: Միևնույն ժամանակ նպատակները խնդրի լուծումը դարձնում են Կառավարության ռազմավարական և ծրագրային նպատակներին համահունչ: Յուրաքանչյուր նպատակ յուրահատուկ է՝ կախված անդրադարձող խնդրից, այդ պատճառով պետք է սահմանել նպատակները՝ կախված տվյալ վելուծության տարբեր մակարդակներից և տարբեր փուլերից:

Մակարդակ	Փուլ ԿԱԳ վերլուծության գործընթացում	Նկարագրություն	Ձեր նպատակները
Ընդհանուր	Խնդիրը սահմանելուց և Ելակետային սցենարը կազմելուց հետո	Վերաբերում է վերջնական արդյունքին, պետք է հաշվի առնվեն ողջ առկա խնդիրները և դրանց հետևանքները, որոնք համատեղ նպաստում են այդ արդյունքին:	Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի մեծածախ առևտրի և ներմուծման ոլորտում որակի, մատչելիության, անվտանգության և արդյունավետության ապահովում
Հատուկ	Ելակետային սցենարը կազմելուց հետո	Վերաբերում է հատկանշված ոլորտում առաջացող անմիջական ազդեցություններին և Կարգավորողի/ԿԱԳ իրականացնողի կողմից ձեռնարկվող մարտավարական միջամտությանը: Հատուկ նպատակը գործիքակազմ է ընդհանուր նպատակին հասնելու համար:	Արտադրողից սպառողին հասնելու ամբողջ ճանապարհին դեղերի անվտանգության և որակի երաշխավորման մեխանիզմների ապահովում
Գործառնական ⁶	Նախընտրելի տարբերակի ընտրությունից հետո	Վերաբերում է գործողությունների վերջնական արդյունքներին կամ նպատակներին, այսինքն՝ ապրանքներին և ծառայություններին, որոնք հանդիսանում են գործողությունների անմիջական արդյունք: Գործառնական նպատակը գործիքակազմ է հատուկ նպատակին հասնելու համար:	<ul style="list-style-type: none"> Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի մեծածախ առևտրի ոլորտում կարգավորման և հսկողության մեխանիզմների ներդրում Դեղերի, դեղագործական արտադրանքի, դեղանյութերի, դեղաբուսական

⁶ Ստորև ներկայացված աղյուսակը լրացվում է գործառնական նպատակների սահմանման ընթացքում:

			հումքի ներմուծում ոլորտում կարգավորումների բարելավում
--	--	--	---

Նպատակները պետք է նշեն այն թիրախային մակարդակները, ինչպես նաև ժամկետները, որոնց պետք է հասնել: Անհրաժեշտ է առաջնորդվել ԿԱԳ ձեռնարկի Բաժին 3-ով:

Հասկանալու համար, թե արդյոք սահմանված գործառնական նպատակները իրականացվում են ամբողջությամբ և ժամանակին, հարկավոր է դրանք արտահայտել «կատարողական ցուցանիշների» (performance indicators) միջոցով: Դրանք պետք է սահմանվեն յուրաքանչյուր նպատակի համար բացառիկ և սահմանվեն դեպքից դեպք հիմունքով:

Եթե ԿԱԳ իրականացնողի կողմից սահմանված նպատակի հիմքում ընկած է, օրինակ, խնդրի տնտեսական կողմը, ապա պետք է հաշվի առնել՝ կցելով այդ տնտեսական հարթության հետ կապված կատարողական ցուցանիշը: Սոցիալական, առողջապահական կամ բնապահպանական նպատակների համար անհրաժեշտ է առաջարկել ցուցանիշներ, որոնք վերաբերում են այդ ոլորտներին:

Ցանկը սպառիչ չէ, և անհրաժեշտ է տրամադրել առավել համապատասխան ցուցանիշները:

Ոլորտ	Ցուցանիշներ (օրինակներ)	Ձեր ցուցանիշները	
Տնտեսական	<ul style="list-style-type: none"> ▪ Վարչական բեռի նվազեցում ▪ Տրված ոլորտում ստեղծված աշխատատեղերի թիվը/ տարեկան ▪ Նոր փորձնականների տոկոսը ըստ ոլորտի/ տարեկան ▪ Վերապատրաստված/որակավորված աշխատողների թիվը տարեկան ▪ Միջին աշխատավարձի աճման տոկոսը ըստ ոլորտի ▪ Ստարտափ (սկսնակ) ընկերությունների սնանկության տոկոսը տարեկան 	<ul style="list-style-type: none"> ▪ Ոչ պաշտոնական գրանցված բիզնեսների թիվը ▪ Տնային տնտեսություններին հասնող լայնաշերտ հաղորդումների թափանցելիության մակարդակ (%) ▪ Առցանց գնումների/վաճառքների աճ 	<ul style="list-style-type: none"> ▪ Սպառողական բավարարվածության մակարդակի բարձրացում ▪ Համապատասխանության և հավաստագիր ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտների համար հավաստագրի ձեռքբերման այլընտրանքային ծախսերի կրճատում

	<ul style="list-style-type: none"> ▪ Տարեկան ներմուծման / արտահանման աճը բացարձակ արժեքով / տոննա / ոլորտ 	<ul style="list-style-type: none"> ▪ Տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտում նոր մասնագետների զբաղվածության թիվը, տարեկան ▪ Հետազոտության և տեխնոլոգիական զարգացման (ՀՏՀ) տոկոսը ընդհանուր ներդրումների մեջ ▪ Նոր արտոնագրերի թիվը ▪ Սպառողական բավարարվածության մակարդակի փոփոխություն ▪ Արտադրողականության տոկոսադրույքի / շրջանառության բարձրացում ▪ Օտարերկրյա ուղղակի ներդրումների աճ 	<ul style="list-style-type: none"> ▪ 100%-ով Համապատասխանության հավաստագիր ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտների համար հավաստագրի ձեռքբերման գործառնական ծախսերի կրճատում 100%-ով ▪ Ներմուծման հավաստագիր ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտների համար լաբորատոր փորձաքննության գործառնական ծախսերի կրճատում 50%-ով
<p>Սոցիալական</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Ստեղծված / բնակեցված սոցիալական բնակարանային շինությունների թիվը ▪ Երեխաների խնամքի հարմարությունների սուբսիդավորման թիվը ▪ Աջակցություն ստացած ծերերի թիվը ▪ Ուսանողների համամասնությունը, ովքեր օգտվել են կրթաթոշակից 	<ul style="list-style-type: none"> ▪ Բռնի հանցագործությունների թվի տարեկան նվազեցումը ▪ Բնակչության կողմից անվտանգության ընկալման մակարդակը ▪ Փոքրամասնությունների համար ստեղծված աշխատատեղերի թիվը ▪ Հեռուստատեսությամբ 	<ul style="list-style-type: none"> ▪ Դեղերի մատչելիության ապահովում

		<p>հեռարձակվող կրթական / մշակութային ծրագրերի ժամերը</p> <ul style="list-style-type: none"> ▪ Հեռավոր վայրերում վարչական ծառայությունների հասանելիությունը 	
Առողջապահական	<ul style="list-style-type: none"> ▪ Քրոնիկ շնչառական հիվանդություններով երեխաների տոկոսը ▪ Բժիշկների / բուժքույրերի / շտապ օգնության / դեֆիբրիլյատորների թիվը (...) 1000 բնակչի հաշվով ▪ Հոսպիտալացման օրերի թիվը ▪ Հիվանդանոցային մահճակալների մատչելիության բարձրացում ▪ Հեծանվային վթարների հետևանքով զոհերի / վնասվածների թիվը 	<ul style="list-style-type: none"> ▪ Աղմուկի մակարդակը աշխատատեղում ▪ Վնասվածքների թիվը աշխատատեղում ▪ XY թունավոր նյութի ազդեցության մակարդակը ջրից / օդից / հողից ▪ Մահացության / հիվանդացության / կյանքի տևողության տոկոսը ▪ Միջին ընդհանուր կալորիայի ընդունման աճը բնակչության ենթախմբի կողմից 	<ul style="list-style-type: none"> ▪ Բնակչության առողջության ընդհանուր բարելավում
Բնապահպանական	<ul style="list-style-type: none"> ▪ XY թունավոր գազի տարեկան արտանետումը, տոննա ▪ XY թունավոր նյութի կոնցենտրացիան ջրի / օդի / հողի մեջ ▪ Բեռնատարերի շահագործման թիվը ժամում (տրանսպորտային միջոցների կողմից արտանետումներ) ▪ Տեսակների / բուսական սորտերի / 	<ul style="list-style-type: none"> ▪ Խմելու ջրի պաշարների հասանելիությունը ▪ Նոր ախտահարված հողի մակերեսը ▪ Վատնվող / վերականգնվող / տրամադրվող / վերամշակվող (թունավոր) թափոնները, տոննա ▪ Վերականգնվող աղբյուրներից էներգիա, կՎտ 	-

	<p>Կենդանական աշխարհի նվազեցում որևէ տրված տարածքում</p> <ul style="list-style-type: none"> ▪ Պահպանվող միջավայրերի և լանդշաֆտների մակերևույթը 	<ul style="list-style-type: none"> ▪ Բնապահպանական ռիսկերի (հրդեհներ, սողանքներ, ջրհեղեղներ և այլն) հավանականությունը 	
--	---	--	--

ԲԱԺԻՆ 4 – ԿԱՐԳԱՎՈՐԻՉ և ՈՉ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԳՈՐԾԻՔՆԵՐ և ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Հնարավոր տարբերակների բացահայտումը խնդրի լուծման և տարբեր ճանապարհներով նպատակներին հասնելու ուսումնասիրման միջոց է: Մեկից ավելի տարբերակների ուսումնասիրումը ապահովում է ԿԱԳ-ի կատարման ուղղությամբ իրականացվող գործընթացում ավելի մեծ թափանցիկություն: Այն նաև ապահովում է տարբերակների ընտրության ավելի կայուն հիմնավորում:

Տարբերակները դառնում են գործնականորեն կիրառելի, եթե հատուկ գործիքներ են օգտագործվում: Այն գործիքները, որոնք վերհանվում են ԿԱԳ իրականացնողի կողմից, պետք է սերտորեն կապված լինեն գործառնական նպատակների հետ, որոնք սահմանված են վերը նշված Բաժին 3-ում: Անհրաժեշտ է առաջնորդվել ԿԱԳ ձեռնարկի Բաժին 4-ով:

Աղյուսակ 1

Գործիքների հավանական տարբերակները <u>Անհրաժեշտ է առաջնորդվել ԿԱԳ ձեռնարկի Բաժին 4-ի Վանդակ 9-ով</u>		Նկարագրեք յուրաքանչյուր գործիք և բացատրեք, թե ինչպես է այն նպաստում նպատակի իրականացմանը	
N	Խումբ		
1.	ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՀՍԿՈՂԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ	Գործիք 1 (խումբ 1)	Փորձագիտական եզրակացության հիման վրա լիցենզիայի տրամադրում
2.	ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ		Գործիք 2 (խումբ 1)
3.	ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ	Գործիք 3 (խումբ 1)	Մասնագիտական դիտարկումներ
		Գործիք 4 (խումբ 1)	Հաշվետվություն
4.	ԱՎԵԼԻ ԼԱՎ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	Գործիք 5	«Պատշաճ բաշխման գործունեության»

		(Խումբ 1,2,4)	կանոններ
		Գործիք 6 (Խումբ 1,2,4)	Պատշաճ բաշխման գործունեության համար պատասխանատու անձ
5.	ԱՊԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՊԱՐԶԵՑՈՒՄ	Գործիք 7 (Խումբ 5)	Գործունեության իրականացման մասին ծանուցում
		Գործիք 8 (Խումբ 1,4)	Լիազոր մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտների գործունեության ստուգումներ
6.	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Գործիք 9 (Խումբ 7)	Դեղատանը պատրաստված և մանրակշռված դեղերի մեծածախ իրացման արգելք
		Գործիք 10 (Խումբ 7)	Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության լիցենզիա ունեցող անձանց, առանց դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի, դեղերի մեծածախ իրացման գործունեության իրականացման թույլատրում
		Գործիք 11 (Խումբ 1)	Իրվական ակտերով դեղերի ներմուծման գործընթացի կարգավորում
		Գործիք 12 (Խումբ 1,2)	Հաշվետվության ներկայացում նախորդ տարում արտահանված արտադրանքի վերաբերյալ
		Գործիք 13 (Խումբ 1,2)	Հաշվետվության ներկայացում նախորդ տարում ներմուծված արտադրանքի վերաբերյալ
		Գործիք 14 (Խումբ 1)	Հայաստանի Հանրապետության տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու իրավունք ունեցող սուբյեկտների

			շրջանակի հստակեցում
		Գործիք 15 (Խումբ 1)	Առանց դեղի գրանցման՝ ներմուծման հավաստագրի տրամադրման շրջանակների ընդլայնում
7. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Գործիք 16 (Խումբ 1, 4)	Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծումն ու արտահանումը մերժելու հիմքերի շրջանակի ընդլայնում
		Գործիք 17 (Խումբ 7)	Դեղերի զուգահեռ ներմուծման թույլտվության ներդրում
		Գործիք 18 (Խումբ 1, 4)	Դեղերի զուգահեռ ներմուծման թույլտվության տրամադրման մերժման հիմքերի սահմանում
		Գործիք 19 (Խումբ 7)	Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծման կամ արտահանման հավաստագիր տրամադրելու համար՝ տարեկան պետական տուրքի սահմանում
		Գործիք 20 (Խումբ 1, 2, 4)	ՀՀ օրենքի խախտման համար պատասխանատվության սահմանում
		Գործիք 21 (Խումբ 5, 7)	Վստահելի լաբորատորիաների կողմից ներմուծված դեղերի (կամ) դեղանյութերի վերաբերյալ եզրակացության առկայության դեպքում ներմուծման հավաստագրի տրամադրում՝ առանց դեղերի նմուշառման և լաբորատոր փորձաքննության, իսկ ԵԱՏՄ-ի անդամ երկրից Հայաստանի Հանրապետություն դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման դեպքում՝ դեղերի
8. Այլ			

			ներմուծում՝ համապատասխանության տրամադրման	առանց հավաստագրի
		Այլ...	-	

Աղյուսակ 2

Տարբերակ 1	Տարբերակ 2 Ելակետային սցենար (առանց գործողությունների տարբերակ)	Տարբերակ 3	Այլ տարբերակ
Նկարագրեք յուրաքանչյուր գործիք և բացատրեք, թե ինչպես է այն նպաստում նպատակի իրականացմանը			
Կարգավորողի նախընտրելի տարբերակը: Տարբերակը բաղկացած է 4-րդ բաժնի Աղյուսակ 1-ում թվարկված գործիքներից, որոնք համակարգված են խնդրի լուծման համար:	Այս բաժինը չպետք է լրացվի նոր կարգավորիչ գործիքների բացակայության պատճառով:	Պետք է լրացվի եթե Կարգավորողը ունի մեկից ավելի տարբերակներ խնդրի լուծման համար:	Պետք է լրացվի եթե Կարգավորողը ունի մեկից ավելի տարբերակներ խնդրի լուծման համար:
<ol style="list-style-type: none"> «Պատշաճ բաշխման գործունեության» կանոնների հաստատում: Դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի տրամադրում մատակարարին Լիազոր մարմի կողմից՝ փորձագիտական եզրակացության հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 		<ol style="list-style-type: none"> «Պատշաճ բաշխման գործունեության» այնպիսի կանոնների սահմանում, որոնք կիրառման տեսանկյունից կլինեն Հայաստանի համար առավել արդյունավետ: Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի մեծածախ առևտրի իրականացման 	

<p>սահմանված կարգով: Դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի հետ մեկտեղ ներդիրի տրամադրվում, որում պարտադիր նշում է կատարվում մատակարարի կողմից մեծածախ իրացման ենթակա՝ պահպանման ընդհանուր պայմաններին բավարարող դեղերի կամ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի կամ արյան բաղադրիչներ եւ դրանցից ստացվող դեղերի կամ իմունաբանական դեղերի կամ ռադիոակտիվ դեղերի կամ բժշկական գազերի կամ սառցային շղթա պահանջող դեղերի մասին (100000 դրամ պետական տուրք):</p> <p>3. Լիազոր մարմնի կողմից մատակարարին «Պատշաճ բաշխման գործունեության» հավաստագրի տրամադրում</p>		<p>գործունեության մասին գրավոր ծանուցում լիազոր մարմնին:</p> <p>3. Լիազոր մարմնի կողմից պատշաճ բաշխման գործունեության կանոնների պահպանման ստուգումներ:</p> <p>4. ՀՀ տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու իրավունք ունեն.</p> <ul style="list-style-type: none"> • դեղերի մեծածախ իրացման գործունեության իրականացման մասին լիազոր մարմնին ծանուցած մատակարարները • առանց մեծածախ իրացման գործունեության իրականացման մասին ծանուցման՝ <p>ա. իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնց գործունեությունը առնչվում</p>	
---	--	--	--

<p>մասնագիտական դիտարկման հաշվետվության հիման վրա (30000 դրամ պետական տուրք):</p> <p>4. Մասնագիտական դիտարկման հետևյալ տեսակների սահմանում՝ ընդհանուր, ընթացիկ և հատուկ:</p> <p>5. Պատշաճ բաշխման գործունեության համար պատասխանատու անձ, որին ներկայացվող պահանջները սահմանում է լիազոր մարմինը:</p> <p>6. Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության լիցենզիա ունեցող անձանց, առանց դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի, դեղերի մեծածախ իրացման գործունեության իրականացման թույլատրում:</p> <p>7. Դեղատանը պատրաստված և մանրակշռված դեղերի մեծածախ իրացման արգելք:</p>		<p>են դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք հետազոտելու, փորձարկումներ անցկացնելու, որակի, արդյունավետության, անվտանգության հսկողության հետ՝ այդ աշխատանքների համար պահանջվող ծավալների և տեսականու սահմաններում, բ.օրենսդրությամբ սահմանված կարգով բարեգործական կամ մարդասիրական որակված ծրագրերի շրջանակներում դեղեր ներմուծող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, գ.Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ արտադրական նպատակներով դեղանյութեր և դեղաբուսական հումք ներմուծելու դեպքում, դ.Օտարերկրյա արտադրողների</p>	
---	--	--	--

<p>8. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 31-ը հաշվետվության ներկայացնում Լիազոր մարմինին՝ իրենց կողմից մեծածախ կարգով իրացված դեղերի վերաբերյալ: Հաշվետվության ձևը և ներկայացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:</p> <p>9. Լիազոր մարմնի կողմից սահմանած կարգով դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասին վարվում է պաշտոնական ինտերնետային կայք, որով տրամադրվում է սպառիչ տեղեկատվություն հիմնական դեղերի ցանկում ներառված դեղերի առկայության</p>		<p>ներկայացուցչությունները կամ ներկայացուցիչները՝ գրանցման և(կամ) փորձարկման նմուշներ (դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք, հետազոտվող դեղագործական արտադրանք) և(կամ) ցուցահանդեսային նմուշներ ներմուծելիս կամ արտահանելիս, Ե.պետական կառավարչական հիմնարկները զ. անհատ ձեռնարկատերերը կամ կազմակերպությունները՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու լիցենզիայի առկայության դեպքում</p> <p>5. Վստահելի լաբորատորիաների կողմից ներմուծված դեղերի (կամ) դեղանյութերի վերաբերյալ եզրակացության առկայության դեպքում ներմուծման հավաստագրի տրամադրում՝ առանց</p>	
--	--	---	--

<p>վերաբերյալ, այդ թվում դեղի առևտրային անվանումը, դրանց մեծածախ առավելագույն հավելագնի, տվյալ պահին (առցանց) առկա քանակների վերաբերյալ:</p> <p>10. ՀՀ տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու իրավունք ունեն.</p> <ul style="list-style-type: none"> մատակարարները՝ դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի առկայության դեպքում, առանց սույն օրենքով նախատեսված մեծածախ իրացման լիցենզիայի առկայության՝ <p>ա. իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնց գործունեությունը առնչվում է դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք հետազոտելու, փորձարկումներ անցկացնելու, որակի, արդյունավետության,</p>		<p>դեղերի նմուշառման և լաբորատոր փորձաքննության, իսկ ԵԱՏՄ-ի անդամ երկրից Հայաստանի Հանրապետություն դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման դեպքում՝ դեղերի ներմուծում՝ առանց համապատասխանության հավաստագրի տրամադրման:</p> <p>6. Տեղեկատվության հրապարակում պաշտոնական ինտերնետային կայքէջում (Տես՝ Տարբերակ 1 կետ 9):</p> <p>7. Ներմուծման մերժման հիմքերի ընդլայնում (Տես՝ Տարբերակ 1 կետ 12):</p>	
---	--	---	--

<p>անվտանգության հսկողության հետ՝ այդ աշխատանքների համար պահանջվող ծավալների և տեսականու սահմաններում, բ.օրենսդրությամբ սահմանված կարգով բարեգործական կամ մարդասիրական որակված ծրագրերի շրջանակներում դեղեր ներմուծող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, գ.Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ արտադրական նպատակներով դեղանյութեր և դեղաբուսական հումք ներմուծելու դեպքում, դ.օտարերկրյա արտադրողների ներկայացուցչությունները կամ ներկայացուցիչները՝ գրանցման և(կամ) փորձարկման նմուշներ (դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք, հետազոտվող դեղագործական արտադրանք) և(կամ) ցուցահանդեսային նմուշներ ներմուծելիս կամ արտահանելիս, ե.պետական կառավարչական հիմնարկները:</p>			
--	--	--	--

<p>11. Սահմանել, որ կենդանաբանական այգիների կենդանիների համար նախատեսված դեղերի ներմուծման դեպքում դեղերի ներմուծման հավաստագրի տրամադրման համար դեղի գրանցված լինելը պարտադիր չէ:</p> <p>12. Որպես Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծման ու արտահանման մերժման հիմք սահմանել նաև հետևյալ դեպքերը, եթե՝</p> <ul style="list-style-type: none"> • ներմուծվող դեղի փաթեթավորման գրառումներում բացակայում կամ գրանցանմուշի հետ չեն համապատասխանում դեղը բնութագրող այն ցուցանիշները, որոնք արտացոլված են գրանցամատյանում, • ներմուծվող արտադրանքի 			
--	--	--	--

<p>փաթեթավորման գրառումներում կամ ներդիր թերթիկում բացակայում են դրա բաղադրության մեջ օգտագործված և լիազոր մարմնի կողմից սահմանված փաթեթի վրա պարտադիր նշման ենթակա օժանդակ նյութերը, իսկ ներարկման, տեղային օգտագործման և ակնաբուժության մեջ կիրառվող դեղերի համար բացակայում կամ գրանցանմուշի հետ չի համապատասխանում որևէ օժանդակ նյութի նշումը,</p> <ul style="list-style-type: none"> • ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում բացակայում կամ գրանցանմուշի հետ չի համապատասխանում դեղի պիտանիության ժամկետի նշումը, • ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում բացակայում կամ գրանցանմուշի հետ չեն համապատասխանում դեղի պահպանման հատուկ պայմանների նշումները, • ներմուծվող արտադրանքի 			
---	--	--	--

<p>փաթեթավորման գրառումներում բացակայում է արտադրական սերիայի նշումը,</p> <ul style="list-style-type: none"> • ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում հատուկ նախազգուշացումները բացակայում են կամ չեն համապատասխանում գրանցանմուշի հետ, • ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում առաջնային փաթեթը բացելուց հետո դրա օգտագործման թույլատրելի ժամկետը բացակայում է կամ չի համապատասխանում գրանցանմուշի հետ, • խախտված է դեղի և (կամ) դեղանյութի տեղափոխման և պահպանման ջերմաստիճանային ռեժիմը («սառցային շղթան»). • ներմուծվող դեղի փաթեթավորման գրառումների լեզուն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ դեղերի 			
--	--	--	--

<p>փաթեթավորման համար ընդունված լեզուներից որեւէ մեկին:</p> <p>13. ՀՀ կառավարության կողմից դեղերի զուգահեռ ներմուծման թույլտվության տրամադրման կարգի ու առանձնահատկությունների սահմանում:</p> <p>14. Որպես դեղերի զուգահեռ ներմուծման թույլտվության տրամադրման մերժման հիմքեր սահմանել հետևյալ դեպքերը, եթե՝</p> <ul style="list-style-type: none"> • դեղի արտադրության երկիրը կամ արտադրողը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի արտադրության երկրին կամ արտադրողին, • դեղի դեղաձևը կամ դեղաչափը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի դեղաձևին կամ դեղաչափին, • դեղի պիտանիության 			
---	--	--	--

<p>ժամկետը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի պիտանիության ժամկետին,</p> <ul style="list-style-type: none"> • դեղի ակտիվ բաղադրատարրը այլ է, քան Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի ակտիվ բաղադրատարրը, • դեղի՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից սահմանած անատոմիական, բուժական, քիմիական դասակարգումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի անատոմիական, բուժական, քիմիական դասակարգմանը, • դեղի առևտրային անվանումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի առևտրային անվանմանը, • դեղի կիրառման ցուցումները կամ հակացուցումները չեն 			
---	--	--	--

<p>համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի կիրառման ցուցումներին կամ հակացուցումներին,</p> <ul style="list-style-type: none"> • դեղը գրանցված չէ այն երկրում, որտեղից ձեռք է բերվել և ներմուծվում է Հայաստանի Հանրապետություն, • Հայաստանի Հանրապետությունում կամ այն երկրում, որից դեղը ներմուծվում է, դադարեցվել է տվյալ դեղի շրջանառությունը դեղի անվտանգության, արդյունավետության և որակի նկատառումներից ելնելով: <p>15. Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծման կամ արտահանման հավաստագիր տալու համար՝ տարեկան պետական տուրքի սահմանում՝ 5000 դրամ:</p> <p>16. Սահմանել, որ եթե</p>			
---	--	--	--

<p>զուգահեռ ներմուծվող դեղի փաթեթավորման կամ պիտակավորման լեզուն տարբերվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի փաթեթավորման կամ պիտակավորման լեզվից, դեղի մեծածախ իրացման լիցենզիա ստացած մատակարարի կողմից մինչև իրացումը իրականացվում է վերափաթեթավորում և վերապիտակավորում:</p> <p>17. Սահմանել. որ զուգահեռ ներմուծվող դեղը դեղի մեծածախ իրացման լիցենզիա ստացած մատակարարի կողմից պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի ներդիր թերթիկով՝ գրառումներում ավելացնելով իր անվանումը, գտնվելու վայրը, տվյալներ՝ սպառողների հետ կապը ապահովելու համար:</p> <p>18. Հաստատել, որ</p>			
--	--	--	--

<p>Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև յուրաքանչյուր տարվա հունվար 31-ը լիազոր մարմին է ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ տարում արտահանված արտադրանքի վերաբերյալ՝ ներառելով արտադրանքի անվանման, դեղաչափի, դեղաձևի, արտադրողի, սերիայի համարի, արտահանված քանակի, արտահանման երկրի տվյալներ:</p> <p>Հաշվետվության ձեւը և ներկայացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:</p> <p>19. Սահմանել. որ զուգահեռ ներմուծման դեպքում դեղի մեծածախ իրացման լիցենզիա ստացած մատակարարը կրում է պատասխանատվություն «Դեղերի մասին» նոր օրենքի 16-րդ հոդվածի 22-րդ մասին</p>			
---	--	--	--

<p>համապատասխան:</p> <p>20. Սահմանել, որ դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի Հայաստանի Հանրապետություն օրենքի խախտմամբ արտադրելը կամ ներմուծելը կամ իրացնելը կամ պահպանելը կամ բաշխելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր անվանմամբ արտադրանքի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:</p> <p>21. Սահմանել, որ օրենքով նախատեսված կարգով հաստատած դեղագրությունների պահանջները խախտելը կամ պատրաստված դեղերի որակի, ձևավորման,</p>			
---	--	--	--

<p>փաթեթավորման, պիտակավորման, պահպանման, իրացման պահանջները խախտելը կամ դեղատանը պատրաստված դեղերը առանց պիտանիության ժամկետի նշման բաց թողնեն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրիսնապատիկից երկուհարյուրապատիկի չափով:</p> <p>22. Սահմանել, որ դեղի մակնշման մեջ, ընդհանուր բնութագրում և ներդիր թերթիկում Հայաստանի Հանրապետությունում դեղի մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը ներառելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրիսնապատի կից երեքհարյուրապատիկի չափով:</p>			
---	--	--	--

<p>23.Սահմանել. որ օրենքով նախատեսված կարգի խախտմամբ՝ առանց հայերեն ներդիրթերթիկի դեղերի իրացումը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր անվանմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:</p> <p>24.Սահմանել, որ օրենքով նախատեսված դեպքերում կամ օրենքով նախատեսված կարգով դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառությունը չդադարեցնելը կամ շրջանառությունից չհանելը (հետկանչ չիրականացնելը) առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի կամ արտադրանքի համար սահմանված նվազագույն աշխատավարձի</p>			
---	--	--	--

